ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

13.07.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Ռ.Մարգարյանը - մարզպետի տեղակալ
Լ.Աբրահամյանը - մարզպետի խորհրդական
Է.Կռոյանը - մարզպետի օգնական
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Ա.Շիրինյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Մատինյանը, Վ.Ղարսայանը, Մ.Խեչումյանը, Լ.Մաթոսյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Ա.Բեջանյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **Այլ հարցեր**:

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Մկրտչյանն իր դժգոհությունը հայտնեց Լոռու մարզում իրականացվող որոշ շինարարական աշխատանքների որակի, ժամկետների խախտումների և դրանց նկատմամբ անփույթ վերաբերմունքի դրսևորման, ինչպես նաև մարզի համայնքների ճանապարհամերձ և դպրոցների բակային տարածքներում չմշակված /չհնձված/ խոտածածկ հատվածներ առկայությունը, ինչպես նաև այն, որ չեն իրականացվում տարածքների պատշաճ մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Ղարիբյանին և Ռ.Մարգարյանին՝

1.1 Անհրաժեշտ և պատշաճ վերահսկողություն սահմանել շինարարական աշխատանքների իրականացման որակի պահպանման ուղղությամբ, այդ նպատակով հանձնարարել նաև Լոռու մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների վարչատնտեսական մասի համակարգողներին՝ իրենց իրավասության սահմաններում

որպես պատասխանատու պաշտոնատար անձինք շինարարության որակի նկատմամբ վերահսկողական գործառույթներ իրականացնելու և ապահովելու համար:

1.2 Հանձնարարել ճանապարհները սպասարկող կազմակերպությունների ղեկավարներին, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին և վարչատնտեսական մասի համակարգողներին ու առաջարկել Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝ իրենց լիազորությունների և սպասարկման տարածքների շրջանակներում ապահովել համապատասխան վերահսկողության իրականացումը և ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպչական ու գործնական միջոցառումներ՝ տարածքների պատշաճ սանիտարահիգիենիկ և բարեկարգ վիճակի պահպանման համար: Այդ նպատակով կազմակերպել և ապահովել համայնքների, ճանապարհամերձ տարածքների, հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի ու բակային տարածքների ամբողջական մաքրությունը, խոտածածկ տարածքների ժամանակին հնձումը, աղբի և այլ թափոնների հեռացումը, ինչպես նաև տարածքների կանոնավոր խնամքն ու բարեկարգ պահպանումը:

1.3 Տրված հանձնարարականների օպերատիվ և ժամանակին կատարման, ինչպես նաև ընթացքում առաջացած կամ տեսանելի պրոբլեմների լուծման նպատակով համագործակցել համապատասխան ստորաբաժանումների, կառույցների և համայնքների պատասխանատուների հետ և տրված հանձնարարականների վերաբերյալ սահմանված ժամկետներում և կարգով ներկայացնել տեղեկատվություն:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-14 09:12:00 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99